539. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, երեսին 6 տող.

ԱՅՍԷ Հ
ԱՆԳԻՍ
ՏԱՆԻԱՆ
ԻԽԱՄՈՒ
ՐԻՆՀՈՒ.
ՈՒՄԻՍԻՆ

ԱՅՍ Է Հ|ԱՆԳԻՍ|Տ ԱՆԻԱՆ|ԻՆ,
ԽԱՄՈՒ|ՐԻՆ, ՀՈՒՐՈՒ|ՈՒՄՍԻՄԻՆ.

540. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, երեսին 3 տող.

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏ
ԱՅՏԻՆԻՆՈՐԴԻ
ՏՐ ՊԱՐՍԵՂԻՆ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ| ԱՅՏԻՆԻՆ,
ՈՐԴԻ| ՏՐ. ՊԱՐՍԵՂԻՆ.

541. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, երեսին 5 տող.

ԱՅՍԷՀԱՆ
ԳԻՍՏԵՂԻ
ԿԻՆՈՐԴԻ
ԽԹՈՒՆՃԱ
ՆԻՆ

ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ԵՂԻ|ԿԻՆ,
ՈՐԴԻ| ԽԱԹՈՒՆՃԱ|ՆԻՆ:

ԱՆՑՅԱԼՈՒՄ ԱՅՍՏԵՂ ԵՂԵԼ ԵՆ ՆԱԵՎ ՀԵՏԵՎՅԱԼՆԵՐԸ

542. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.

Այս Է հանգիստ Մկրտչին. ողորմի ասացէք. թվ. :Ռ: (1551):

Հրատ. Սմբատյանց, 569։ Լալայան, XIX, 8։

543. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.

Սուրբ խաչս բարէխաւս պապի որդի Փասաքային.

Ծանոթ. Փասաքա անունը համարում ենք կասկածելի։

Հրատ. Սմբատյանց, 569։ Լալայան, XIX, 9։

## ԼԻՃՔ (ԱՆՑՅԱԼՈՒՄ ԳՅՈԼ)

Գյուղի հին անունը հայտնի չէ, տեղացի հեղինակները ենթադրում են, որ մինչև մոտիկ անցյալը թուրքերեն Գյոլ անվանումը պարզ թարգմանություն է եղել հայերենից, հետևաբար հին անունը պիտի լիներ Լճատեղ, Լճագյուղ կամ Եղնգնագյուղ. սակայն աղբյուրների մեջ նման անվան հիշատակություն չկա։

Արձանագրություններ ունեցող հին հուշարձանները գտնվում են գյուղի հարավ-արևմտյան եզրին բարձրացող բլրի հարթ ղադաթին. այստեղ մի շրջապարսպի մեջ են Ծաղկեվանքը, ս. Աստվածածին եկեղեցին և ընդարձակ գերեզմանատունը։

Ս. Ծաղկեվանք, մի փոքր մատուռ է, կից շրջապարսպի հյուսիս-արևելյան անկյունին. ծածկն ու պատերի վերին մասերը փլած։ Մատուռի ներսում կանգնած են երեք խաչքար՝ երկուսը մեկ, երրորդը առանձին պատվանդանի վրա. պատկանում են միևնույն դերդաստանին և ունեն արժեքավոր արձանագրություններ. դրանք միաժամանակ այստեղի հնագույն հուշարձաններն են. առաջինը թվագրված է 1284 թ. (№ 544)։

Բ. Գերեզմանատուն, բռնում է պարսպափակի ողջ տարածությունը և շրջապատում եկեղեցիններին։ Այստեղ կան մեծ թվով խաչքարեր և տապանաքարեր՝ մի մասը բարձր արվեստի գործեր. հնագույնն ունի 1291 թ. (546)։

Դ. Ս. Աստվածածին, շինված է ճեղքած քարերով և փայտածածկ է. գտնվում է գյուղի հյուսիս-արևմտյան մասում, Ծաղկեվանքից մոտ 50 մետր հեռու։ Պատերի, մանավանդ բեմի ներսի կորության մեջ ագուցված են բազմաթիվ խաչքարեր, որոնցից հինը՝ 1456 թ. (№ 580)։ Այստեղ, արձանագրությունները ընդօրինակելու ժամանակ, բեմի վրա ընկած վիճակում գտանք Արտաշիսյան սահմանաքարի մի բեկոր՝ արամեերեն արձանագրության մնացորդներով, որը և անմիջապես տեղափոխեցինք Երևան։

Մեր ժողովածուի մեջ ամփոփված այս գյուղի 58 արձանագրություններից միայն 6-ն է եղել հրատարակված։

## ԾԱՂԿԵՎԱՆՔ

**544. ԽԱՉՔԱՐԵՐ**, երկու հատ, կանգնած իրար կից մեկ պատվանդանի վրա. գտնվում են Ծաղկեվանքի ներսում արևելյան պատի տակ. արձանագրությունը տեղավորված է ներքևի մասում, շարունակված երկուսի վրա. 8 տող.



Ի ԹՎ.:ՉԼԳ:(1284) Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵ. ՏՐ. ԳՐԻԳՈՐԻ ՄԵՔ :Ե: ԵՂԲԱՅՐ ԱԲ-ՐԱՀԱՄ ՔԱՀԱՆԱՅ.| ԱՆԱՐԺԱՆ ՀԱՅ-ՐԱՊԱՅՆ ԵՒ ԱՅԼՔՍ, ԿԱՆԿՆԵՑԱՔ| ԶԽ[Ա]Չ[Ս]ԵՐՍ| ՀԱՒՐԵՂԲԱՒՐ ՄԵՐՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ, ԿՈՒՍԱԿՐԱԻՆ| ՔԱՀԱ-ՆԱԻ ԲԱԶՄԱՋԱՐՋԱՐ ՄՆՈՒՑՈՂԻ. ԵՒ ԾՆՈՂԱՑ Մ|ԵՐՈՑ ՀԱՅՐՈՒՏԻՆ ԵՒ ԽԱԹՈՒՆԻՆ, ԵՒ ՔՎԵՐ ՄԵ[Ր]Ւ.| ՑԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ: ԵՒ ԷՐ ՄԵՐ :Բ: ԱԿՆ Ի ՋՂԱԾՔԱՐԻՆ՝ ԽԱՄ|Ո ՇԻՆԱԾ: ՊԱՀՈՂ ԷԱՔ ԳԱՐԱՊԻՍ ԳԱՆՁԻՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ:

Ծանոթ. Հրատարակիչների մոտ կան մեծ աղավաղումներ, մանավանդ վերջին մասում։

Հրատ. Շահխաթունյանց, Բ, 248։ Ալիշան, 54։ Սմբատյանց, 518։ Լալայան, XVIII, 142։ Լուսանկ. 116 (երկու մասից)

**545. ԽԱՉՔԱՐ**, մեծ, ղեղաքանդակ, կանգնած է Ծաղկեվանքի ներսում, հյուսիսային պատին կից. ճակատին և հարավային կողին.



ՅԱՆՈՒՆ Ա.Յ. ՄԵՔ :Գ: Ե|ՂԲԱՐՔՍ ՏԻՐԱՑՈՒ ՔԱՀ[Ա]ՆԱՅ[Ք],|ՏՐ. ՈՒՍԱՄ, ՏՐ. ՏԻՐ ԿԱ[Ն]ԿՆԵՑ|ԱՔ ԶԽԱՉՍ ՀԱՒՐ ՄԵՐ ԱԲՐԱՀԱՄ|ՔԱՀ[Ա]ՆԱԻ[Ն], ՈՐ Է ՀԱՆԳԻՍՏՆ-

ԻՍ ԵՒ ԱՍՏ|ՔԱՂԱՔ.Ի, ՈՐ ՓՈԽ|ԵՑԱՒ Ի|ՔՍ. Ե|ՐՈՒՍԱՂԷ|ՄԻ| ՃԱՆ.ԱՊԱՐՀ|ԻՆ.
ՑԻՇ|ԵՑԷՔ|ՑԱՂԱ|ԻԹՍ: Թվ. :ՉԿԲ: (1313):

Ծանոթ. *Պատվով գրված ՏԻՐ անձնանունը կարելի է վերծանել ՏԻՐԱՏՈՒՐ, ՏԻՐԱԻԱԳ, ՏԻՐԻ, ՏԻՐԱՆՑ և այլն։*

Լուսանկ. 117 *(3 մասից)*

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

**546.** ***ԽԱՉՔԱՐ****, մեծ, կանգնած է գերեզմանատան հարավային մասում, մի թմբի վրա. տակին եղծված արձանագրություն, 2 տող.*

ԹՎՉԻԿԱՆԿՆ··ԱՒԽԱՆՍԱՂ·· Թվ. :Չխ: (1291) ԿԱՆԿՆԵՑԱՒ ԽԱՉՍ
ԱԲԻՆԵՒԵ ԲԱ·····Ն·········· . . . . ԵՒ ԵՂԲԱՐԻՐ . . . ՆՈՐԱ

**547.** ***ԽԱՉՔԱՐԵՐ****, հինգ հատ, կանգնած են Ծաղկեվանքի արևմտյան պատի դեմ, իրար կից. պատկանում են մի ընտանիքի.*

*Ա. ՀՑՈՒՍԻՍԱՑԻՆԻ շրջանակներին և ստորին մասում.*



ԱՆՍԻՆ| ԱՑ. ԿԱՆ|ԿՆԵՑ|ԱՔ ՉԽ|ԱՉՍ
Փ|ՐԿՈՒ|ԹԵ ՀՈ|ԳՈՑՆ ԷՐ|ՏԱՄԻՆ ԵՒ
ԿՆՈՋՆ| ՍԱՒԼԹԱՆ ՄԵԼԻՔԻՆ ԵՒ|:Բ:
ՈՐԴ|Ո|ՑՆ.| Թվ. :ՋԻՁ: (1477):

Լուսանկ. 118

**548.** *Բ. ՀՑՈՒՍԻՍԱՑԻՆ շրջանակի ստորին մասում, տակին և թևերի արանքում. արձանագրությունը խիստ մաշված և անորոշ է, երևում են միայն առանձին բառեր և տառեր. թևերի շուրջը եղած թվականն է միայն լավ պահպանված, որ է՝ Թվ. :ՋԽԳ: (1494):*



***549. Գ. ՏԱԿԻ ՄԵԾ ՎԱՐԴՑԱԿԻ ԿՈՂՔԵՐԻՆ, 3 տող.***



ԵՍ ԱՄԻՐ Պ.Ո.Դ.Ո.Ս ԿԱՆԿՆԵՑ.Ի
ԽԱՋՍ| ՄԱՒՐ ԻՄ ՍՈՒՆԻՆ ԵՒ|
ՍՈՒՔԻԱՍԻՆ. Պ.ԵՏՐ.ՈՍ։

Լուսանկ. 119

***550. Դ. ՏԱԿԻ ՄԱՍՈՒՄ. 3 տող.***



ԵՍ ՍՈՒՔԻԱՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՋՍ
ԱՋ|ԱՐԻԱՑ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԵՒ ԿՆՈՋ
ԻՒՐ ԳՈՒ|ԼՓԱՇԻՆ։

***551. Ե. ՀԱՐԱՎԱՅԻՆԻ ՔԻՎԻՆ, 1 տող.***



ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ԲԷԿԷՍԻՆ ԵՒ
ՍՈՒՔԱՍԻՆ. ԹՎ. ։ՋԿԸ։ (1519)։

*Ծանոթ. ԲԷԿԷՍ անունը կասկածելի է, նախ՝ Բ տառի ստորին մասում մի ելուստ կա, ապա դրանից հետո մի տառ ջնջված է, պարզ չի՝ գրչի կողմից թե հետագայում. այդ տառի մնացորդը Ա-ի նմանություն ունի։*

Լուսանկ. 120

***552. ԽԱՉՔԱՐ**, մեծ և գեղաքանդակ, չորս շրջանակներին և խորանի վերին անկյուններում. 5 տող.*



ԿԱՄԱՒ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԴԵ|Դ.Ս, ԲԱՂԱԴՔՍ, ՆԱՏԱՐՍ, ՍՎԱՆԷՍ, ՈՀԱՆԷՍ ՔՍՀԱՆԷՍ| ԵՒ ՎԱՐԴԱՆՍ| ԿԱՆԿՆԵՑԱՔ ՍԲ ԽԱՉՍ ՑԻՇԱ-ՏԱԿ ՀԱՒՐ ԻՄՈ ԲԱՏԱՐԻՆ.|ԹՎ. ։ՋԼԵ։ (1486)։

*553. ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ. գեղաքանդակ, կանգնած են իրար կից, Ծառկեկանքի արևմուտքում.*

*Ա. ԹԵՎԵՐԻ ԱՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԵՎ ՍՏՈՐԻՆ ՄԱՍՈՒՄ, 3 տող*



ԹՎ. :ՋԿԴ: (1515) ԵՍ ԳՐԻԳՈՐՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ԷԳԲ|ԱԻՐ ԻՄ ԽՈՃԻԿԻՆ:

Լուսանկ. 121

*554. Բ. ՔԻՎԻՆ ԵՎ ԹԵՎԵՐԻ ԱՐԱՆՔՆԵՐՈՒՄ, 2 տող.*



ԱԾ. ՈՂՈՐՄԻ ԽՈՆԴԱՂԻՆ.| ԹՎ. :ՋՀԷ: (1528):

*ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ, մեծ և գեղաքանդակ, կանգնած են իրար կից, գերեզմանատան կենտրոնում:*

*555. Ա. ՔԻՎԻՆ ԵՎ ՍՏՈՐԻՆ ՄԱՍՈՒՄ, 2 տող.*



ԵՍ ԱՄԻՐԳՈՒԼ . . . . . [ԿԱՆ]ԿՆԵՑԱՔ ԽԱՉՍ| ԵՂԲՈՐ ՄԵՐ ՇԻԽԻՆ. ԹՎ.:ՋԿԶ: (1517):

*556. Բ. ՔԻՎԻՆ ԵՎ ՇՐՋԱՆԱԿԻՆ.*



ԵՍ ՈՍԿԱՆ ԷՐԷՑՍ, ՈՐԴԻ ՍԱՐԳՍԻՆ, ԿԱՆԿՆԵՑ|Ի ՍԲ ԽԱՉՍ . . . .

Ծանոթ. *Ստորին մասի վրա պիտի լիներ շարունակությունը, որը ծածկված էր և բացել չկարողացանք:*

Լուսանկ. 122

*557. ԽԱՉՔԱՐԵՐ. երեք հատ, կանգնած են իրար մոտ, ածածին եկեղեցու արևելյան կողմում. վերաբերում են մի ընտանիքի:*

*Ա. ՀԱՐԱՎԱՅԻՆԻ քիվին և խորանի անկյուններում, 2 տող.*



ԵՍ ԲԱՐՍԵՂՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՀԱԻՐ ԻՄ ՄԽԻԹԱՐԻՆ.|ԹՎ.:ՋՀԱ: (1522):

Լուսանկ. 123

*558. Բ. ՄԻՋԻՆԻ քիվին և խորանի վերին անկյուններում, 2 տող.*



ԽԱՉՍ ԲԱՐ⌊Է⌋ԽԱԻՍ ԲԱՐՍԵՂԻՆ.
Ի ԹՎ. :ՌԻ: (1571):

*Ծանոթ. Թվականը նշանակող տառերի դասավորությունը թույլ է տալիս վերծանելու նաև թվ. :ՌԻ:*

Լուսանկ. 124

*559. Գ. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆԸ ամենամեծն ու գեղաքանդակն է, որի քիվին և թիկունքին 2 տող.*



ՍԲ. Խ⌊Ա⌋ՉՍ Բ⌊Ա⌋ՐԷԽԱԻՍ ՄԿՐՏՉԻՆ.
ԹՎ. :ՌԼ: ԴԱՒԻԹ ՆԿԱՐՈՂ.

*Ծանոթ. Կազմողի ստորագրությունը թիկունքին է։ Թվականի տասնավորը համարում ենք կասկածելի։*

*560. ԽԱՉՔԱՐ, մեծ և գեղաքանդակ, քիվին և շրջանակների ստորին մասերում 2 տող.*



ԵՍ ԱԽԱՔՍ ԿԱՆԿ⌊Ն⌋ԵՑԻ Զ Խ⌊Ա⌋ՉՍ
ՓՐԿՈՒ⌊ԹԻ⌋ ՀՕՐ ԻՄՈ ԷԶ|ԴԱՆԻՆ:
ԹՎ. :ՋՀԷ: (1528):

*561. ԽԱՉՔԱՐ, գեղաքանդակ, քիվին և թևերի շուրջը, 2 տող։*



ԵՍ ԱԶԱՐԻԵՍ, ՈՎԱՆԵՍ, ԿԱՆ⌊Կ-
Ն⌋ԵՑԻ⌊Ն⌋Ք Խ⌊Ա⌋Չ⌊Ս⌋ ՀԱԻՐ ՄԵՐ
ԱԼԷ⌊Ք⌋ՍԱՆԻՆ: ԹՎ. :ՋՀԷ: (1528):

*562. ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքր, օրորոցաձև. հարավային կողին 1 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԳՐԻԳՈՐԻՍԻՆ.
ԹՎ. :ՋՀԷ: (1528):

Լուսանկ. 125

563. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, գտնվում է ածածին եկեղեցու արևելյան կողմում. հյուսիսում մի մարդ՝ ձեռին գուրզ, կողքին աղեղ, տպտ գավ, մկրատ, էլի գավ, փող, մի մարդ ձեռները խաչած կրծքին, ապա զանազան գործիքներ. շրջանակներին 2 տող.

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏՈՒՍՏԱՑՄԱՐՏԻՐՈՍ
ՆԹՎՋՂԸ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՈՒՍՏԱՑ ՄԱՐՏԻՐՈ-
Ս|ԻՆ. ԹՎ. :ՋՂԸ: (1549):

564. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, գտնվում է նախորդի մոտ. հարավային կողին առյուծաձև կենդանի՝ տրորում է վիշապին, ապա ձեռները խաչած մարդ՝ ճոնի գործիքներ և կաղապար, մկրատ, ըլիթներ ու ղավ և երկու լարանի սաղ. շրջանակներին 2 տող.

ԱՅՍԷՀԱՆԳՍՄՄԼՔԱՅՊԷԿԻՆՈՐԷՍԱԻՐԵԱՅՓՈԽԵՑԱԻՔՍԹՎ
ՋՁԷ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄԼՔԱՑՊԷԿԻՆ, ՈՐ ԿԷՍԱԻՐԵԱՑ ՓՈԽԵՑԱԻ Ի
ՔՍ. ԹՎ.|:ՋՁԷ: (1538):

Լուսանկ. 126

ԽԱՉՔԱՐԵՐ, հինգ հատ, մեծ և գեղաքանդակ. կանգնած են իրար կից, Ծաղկեվանքի արևմտյան կողմում. վերաբերում են մի ընտանիքի.

565. Ա. ՔԻՎԻՆ ԵՎ ՏԱԿԻՆ 2 տող.

ԵՍՓԻՐԷՎԱՍԻՄՈՐԴԻՔՍԿՆԿԻԽԱՍՀԳ
ԹՌԻ

ԵՍ ՓԻՐԷՎԱՏՍ. ԻՄ ՈՐԴԻՔՍ Կ[Ա]ՆԿ-
[ՆԵՑ]Ի[ՆՔ] Խ[Ա]ՋՍ Հ[Ո]Գ[ՈՑ]|
ԹՎ. :ՌԻ: (1571):

Ծանոթ. Առաջին տողը լրիվ է, շարունակելու տեղ չկա։ Թվականը՝ ասկին։

566. Բ. ՆԱԽՈՐԴԻՆ կից հարավից. քիվին 1 տող.

ՄԻԽԱՍԲԱՐԽՍԳՈՒԼԱՄԻՆ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ԳՈՒԼԱՄԻՆ.

567. Գ. ՆԱԽՈՐԴԻՆ ԿԻՑ ՀԱՐԱՎԻՑ, ՔԻՎԻՆ ԵՎ ՆԵՐՔԵՎԻ ԳՆԴԻ ԱՆԿՅՈՒՆ-ՆԵՐՈՒՄ, 3 տող.

ՄԲԽՉՍԲԱՐԷԽԻՍՈՍԿՆՔԱՀԱՆԱՅԻՆ




ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽ[Ա]ԻՍ ՈՍԿԱՆ
ՔԱՀԱՆԱՅԻՆ ԹՎ.| :Ռ|ԾԳ: (1604):

Լուսանկ. 127

*568. Դ. ՆԱԽՈՐԴԻՆ ԿԻՑ ՀԱՐԱՎԻՑ, ՃԱԿՏՈՆՈՎ ԵՎ ՇԱՐՔԻ ԱՄԵՆԱՄԵԾՆ ՈՒ ԳԵՂԵՑԻԿԸ. ճակտոնի վրա 2 տող.*



ԱԿՈԲ ՆԿԱՐՈՂ. ԹՎ. ՌԾԸ: (1609):
ՄԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՄԱՐԻՆԱ ԱՊԱՅՇԽԱՐՈՅԴԻՅՆ

Լուսանկ. 128

*569. Ե. ՆԱԽՈՐԴԻՆ ԿԻՑ ՀԱՐԱՎԻՑ, ՔԻՎԻՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻՆ. 4 տող.*



ԵՍ ՀԵԻԱՏՍ . . . . . ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՄԻՐԿԻՉԻՆ. ԹՎ. ՌԾՉ: ԿԱԶՄՈՂ . . . ԵՍ ՈՍԷՊ ԿԱԶՄԵՑԻ:

*Մանրր. 1, 3, 4 տողերը լրացված են հետո։*

*570. ԽԱՉՔԱՐ, գեղաքանդակ, կանգնած է գերեզմանատան կենտրոնական մասում. քիվին և թևերի արանքներում 3 տող.*



ՍԲ ԽԱՉ ԼՈՒՍԱՏՈՒԱՒՍԱՆԷՍԻՆ . . . . . . . . ԵՍ ԴԱՆԷԼ ԿԱՆԿՆԵՑԻ ԹՎ. ՌՂԸ: (1649):

*571. ՏԱՊԱՆԱՔԱՐ, շատ մեծ (երկ. 1,08 սմ. լայն. 60 սմ. և բարձր. 75 սմ.) գտնվում է երկու եկեղեցիների արանքում. հարավային կողին՝ երկու պարող կանայք՝ ձեռներին դավ ու բլիթ. և մեկ ուրիշը՝ նույնեցյալ՝ ձեռները խաչած կրծքին. սրանց արանքներում՝ գործիքներ ու զենքեր՝ հրացան, դաշույն. ապա նվագող և պարողներ, սրանցից ներքև թամքած ձի՝ դիմացը պարող, ապա հացի սեղան, լիքն ուտելիքներով։ Արևմտյան ճակատին քարայծ. հարավային կողի պատկերներից վեր երկու տող. ներքև՝ կազմողի ստորագրությունը.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՎԱՔԻՆ, ՈՐԴԻ ԱՂԻՆ, ՆԱՆԵՐԻՆ ԿՈՂԱԿԻՑ. ԵՒ ՄՕՐՆ ՍՕԼԹԱՆԻՆ: ԹՎ. ՌՃԷ: (1658): ԵՍ ԱՎԱՆԷՍ ԽՉՆԱՑՎԱՐՑԻ ԿԱԶՄԵՑԻ.

572. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, տափակ, երեսին 2 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՄՐԱԾԱՅ
ԾՈՒՐԻՆ ԹՆՌՃԻԵ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՏՐ ԱՍՏՈՒԱԾԱՅ
ՏՈՒՐԻՆ ԹՎ,Ի,Ն :ՌՃԻԵ: (1676):

573. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև. գտնվում է երկու եկեղեցիների արանքում. հյուսիսային կողին արոր, քլունգ, մկրատ և մաճակ, ապա գավ ու երկլարանի սազ. ննջեցյալ և կողքին գործիքներ. արևելյան ճակատին և քանդակների մոտ 12 տող.*

ԱՅՍԷ
ՀԱՆԿԻ
ՍՄԱՅԼԻՔ
ԻՆ· ·ՄՐԱ
ՎԱՆԷՍԻ
. . . . . .

ԹՎՌ.
ՃԾԸ

ԱՅՍ Է ՀԱՆԿԻ|ՍՏ ՄԱՅԼԻՔ|ԻՆ, [ՈՐԴԻ] ՏՐ|
Ա|ՎԱՆԷՍԻ. . . . . . . ԹՎ. :ՌՃԾԸ: (1709):

Ծանոթ. *Թվականը հյուսիսային կողին է։ Սարքին հինգ տողերը խիստ վնասված են և չեն վերծանվում։*

574. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, գտնվում է երկու եկեղեցիների արանքում. երեսին 2 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏԱՎԱՔԻՆ
ԹՎՌՃԻԱ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՎԱՔԻՆ|
ԹՎ. :ՌՃԻԱ: (1672):

575. *ԽԱՉՔԱՐ, նախորդից հարավ. քիվին 1 տող.*

ՔԽԱՉՍԲԱԽՍԱԱԳԻՆ

ՔՐ. ԽԱՉՍ ԲԱՐ[Է]ԽԱՒՍ ԱԻԱԳԻՆ:

576. *ԽԱՉՔԱՐ, մեծ և գեղաքանդակ, շրջանակներին 3 տող.*



ԵՍ ԳՐԻԳՈՐՍ ԿԱ[Ն]Գ[Ն]ԵՑԻ ԽԱ[Չ]Ս|
Ի ՓՐԿՈՒԹԻ ԾՆՈՂԱՑ ԻՄ| ՄՍՐՇԻՆ
ԵՒ ԻՒՐ ՄԱՒՐՆ ԵՒ ՈՐԴՈՑ:

Լալայեան. 129

*577. ԽԱՉՔԱՐ, կանգնած է երկու եկեղեցիների արանքում. քիվին 1 տող.*

ՍԲԽԱՉԶԲՄԷԽԱ ՍՏԱՆԻ ԿՈՒԼՃԸՍ — ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ԿՈՒԼՃԸՍՏԱՆԻՆ:

*578. ԽԱՉՔԱՐ, կանգնած է Ծաղկեվանքի հարավում. քիվին 1 տող.*

ՄԲՉՍԲՄԷԽԱՍԱՌՔԵԼՔՀՆԻՆ — ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ԱՌԱՔԵԼ ՔԱՀԱՆԱՑԻՆ:

*579. ԽԱՉՔԱՐ, նախորդի մոտ, քիվին 1 տող.*

ՄԲՉԲՄԽՍՄԴՐԻՆ — ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՄԱՐԴԱՐՏԻՆ:

*580. ԽԱՉՔԱՐ, քիվին 1 տող.*

ՄԲԽՉԲՄՄԽԹԱ — ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՄԽԻԹԱՐԻՆ:

*581. ԽԱՉՔԱՐ, քիվին 1 տող.*

...ԱՉԲՄԷԽՍԱՌԸՍՏԱԿԷՍՆ — ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ԱՌԸՍՏԱԿԷՍԻՆ:

*582. ԽԱՉՔԱՐ, քիվին 1 տող.*

ՄԲԽԱՉՍԲՄԽԱԶԱՐԻ — ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ԱԶԱՐԻՆ:

*583. ԽԱՉՔԱՐ, փոքր, քիվին 1 տող.*

✝ ԵՍՄԱԹՈՍՍԿՆԿԵՑ ....... — ԵՍ ՄԱԹՈՍՍ ԿԱՆԿՆԵՑԻ .....

*584. ԽԱՉՔԱՐ, փոքր, քիվին 1 տող.*

ԵՍՈՍԿԱՆՍԿՆԿԵՄԲԽՉՍՓԱՇԱՅԴԿ — ԵՍ ՈՍԿԱՆՍ ԿԱՆԿՆԵՑԻ ՍԲ ԽԱՉՍ ՓԱՇԱՅԻ ԴԿԷԿԻՆ:

*585. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, ընկած է ամառային եկեղեցու մուտքի մոտ. քիվին և թևերի արանքներում 2 տող.*

ՍԲԽԱՍԲԽՍԱԹՈ

Ս | ԻՆ — ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՄԱԹՈՍԻՆ

*586. ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքր, հյուսիսային կողին միացված արորով հերկող. արորն ունի անիվներ և ձեռքեր. հերկողի կողքին գործիքներ. եզներից վեր 2 տող.*

ԵՍԱՌԱՔԵԼ··ԿԱՆ — ԵՍ ԱՌԱՔԵԼ . . . . ԿԱՆԿՆԵՑԻ:
ԵՑԻՄԲԽԱՉ···Մ···· — ՍԲ. ԽԱՉՍ . . .

*587. ԽԱՉՔԱՐ, փոքր, քիվին 1 տող.*



ԵՍ ԳՐԻՔՈՐՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՆԱՍԷՐԻՆ։

*588. ԽԱՉՔԱՐ, փոքր, քիվին 1 տող.*



ԵՍ ԱԼԱՆՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ԲԷԿԻՍ։

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

*589. ԽԱՉՔԱՐ, մեծ, ագուցված է արևելյան պատի հյուսիսային մասում, ներքուստ, շրջանակներին 6 տող.*



ԱՆՈՒՆ ԱՑ ԵՍ ՃԱՆՏ⌜Ա⌝ՐՍ, ԻՇԽԱՆԱՑ ՈՐԴԻ ՀԵՐ|ԻՑԻ, ԿԱՆԿՆԵՑԻ ՁԽԱՉՍ| ՓՐԿՈՒԹԵ ՀՈԳՈՑ ԻՄՈՑ. :ԺԸ: ՏԱՐԻ ԴԵՂ|Ս ԱԻԵՐ ԷՐՇԻՆԵՑԻ, ⌜ԻՇ⌝ԽԱՆՈՒԹԻ. ԱՐԻ. ՈՎ ՈՐ ՀԱՆ⌜ԴԻՊԷՔ Ց⌝ԻՇԵՑԷՔ. ԹՎ. :ՋԵ: (1456)։

Ծանոթ. *Վերևի մեկ տողը շրջագիր է։*

*590. ԽԱՉՔԱՐ, ագուցված է բեմի կորության հյուսիսային շրթունքին, քիվին և ներքևի մասում 2 տող.*



ԵՍ ՄԱԹԷՈՍ ՔԱՀԱՆԱՑ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ԶԱՔԱՐԻԱՑ ԱԲԵՂԻՆ.
ԹՎ. :ՋՀԷ: (1528)։

*591. ԽԱՉՔԱՐ, ագուցված է բեմի կորության մեջ, ներքուստ, քիվին և խաչի թևերի տակ, 3 տող.*



ԱԻԱՔՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՀՕՐ ԻՄ ԱՆՏՈՆ ՔԱՀԱՆԱՑԻՆ։
ԹՎ. :Ջ|ՁՁ: (1637)։

**592. ԽԱՉՔԱՐ**, *գեղաքանդակ, ագուցված է բեմի կորության մեջ, ներքուստ. քիվին և խաչի թևերի շուրջը, 4 տող.*



ՍԲ. ԽԱՉՍ ԵՂ[Ի]Ն. ՄԿ[Ր]Տ[Ի]Չ[Ի]. ԱՑԾԱ Տ[Ի]ՈՒՐ ԿԱՆԳՆԵՑԻ. ՊԱԽՇԱՑԻՇ ԿԱՋ[Ի]ՄՈՂ: ԹՎ. :ՋՂԸ: (1539):

**593. ԽԱՉՔԱՐ**, *մեծ և գեղաքանդակ, ագուցված է եկեղեցու հյուսիսային մուտքի կողին, երեսով՝ արևելք. խորանի վերին անկյուններում միայն թվականը.*



ԹՎ. :ՌԷ: (1558):

**594. ԽԱՉՔԱՐ**, *մեծ և գեղաքանդակ, ագուցված է նախորդի մոտ. քիվին, խորանի վերևներում և խաչի թևերի արանքներում ուռուցիկ տառերով, 7 տող.*



ԽԱՉՍ ԲԱՐԷԽՈՍ ԻՄԱՆԻՆ./ ԹՎ. :ՌՃԾԵ: (1706): ԵՒ ԻՇԽԵՑԷ|Ք ՅՈՒՆԱՆՍ.| ՊԱՂԻՄ Կ|ԱՋՄՈՂ ԽԱ|ՉԻՍ:

**595. ԽԱՉՔԱՐ**, *ագուցված է բեմի կորության մեջ. ճակատին և շրջանակներին.*



ՅԱՆՈՒՆ ԱՑ ՄԵՔ ՀՐԱՏ|ԻՍ ՈՐԴԻ|Ք| ՈՒՍՈՒՆՍ, ԹԱՀԱՄՍ, ԵՐԱՆՇ[Ա]Հ, |ԿԱՆԿ[Ն]ԵՑԱՔ Զ[Խ]Ա |[ՉՍ]| ԶԱՒԱԿԱՑ . . .

Ծանոթ. *Խաչքարի քիվը ջարդվել են նոր տեղադրության ժամանակ։*

**596. ԽԱՉՔԱՐ**, *ագուցված է բեմի կորության մեջ. քիվին թերի 1 տող.*



ԵՍ ԱՆՏՈՆ Ք[Ա]ՀԱՆԱ[Յ]Ց ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՄԱՒՐ ԻՄՈՑ . . .



10—619

597. ԽԱՉՔԱՐ, ագուցված է արևելյան պատի հարավային մասում, ներքուստ. քիվին 1 տող.




ԹՄԲ. ԽԱՉՍ ԲԱՐ[ԷԽԱՒՍ] ՆԱԶՈՒՄԻՆ:

598. ԽԱՉՔԱՐ, ագուցված է բեմի կորության մեջ, ներքուստ, քիվին և շրջանակին 2 տող՝




ԵՍ ՇԷՐԱ ԿԱՆԿՆԵՑ[Ի] ԽԱՉՍ ՀԱՊՍԼԻ.|. . . . .

599. ԽԱՉՔԱՐ, ագուցված է բեմի կորության մեջ. քիվին 1 տող.



ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐՍ ՔԱՀԱՆԱՅՍ, ԹՈՒՄԱ, ԿԱՆԳՆԵՑԱՔ ԽԱՉՍ ՀԱՒՐ ՆԱՏԱՐԻՆ.

Ծանոթ. Բոլոր անձնանունները գրված են սղումներով և կարելի է տարբեր կերպով վերծանել։

600. ԽԱՉՔԱՐ, մեծ, ագուցված է բեմի կորության մեջ. քիվին և շրջանակներին 3 տող.




ԵՍ ՍԱՀԱԿՍ ԿԱՆ[Գ]ՆԵՑԻ| ՄԲ. ԽԱՉՍ ՑԻՇԱՏԱԿ ՄԱՒՐ ԻՄՈՅ Ա|ՂՈՒՏԻՆ ԵՒ ԵՂԲԱՒՐ ԻՄ ԵՉՏԱՆԲԱԽՇԻՆ:

## ՎԱՐԴԵՆԻԿ (ԱՆՑՅԱԼՈՒՄ՝ ՆԵՐՔԻՆ ԳՅՈՂԱԼԴԱՐԱ, ՀՆՈՒՄ՝ ՎԱՐԴԵՆԻՔ)

Գյուղի հին՝ Վարդենիք անունը հիշատակված է Ստ. Օրբելյանի ցուցակում. դրանք եղել են երկուսը, ինչպես որ մինչև վերջերս էլ կային երկու Գյոզալդարաներ։ Դրանցից ներքինն, ինչպես երևում է, միշտ էլ մեծ է եղել. Օրբելյանի ցուցակում ներքինի հարկի չափը 15 է, իսկ վերևինը՝ 6։

Այս գյուղի ներկա սահմաններում կան մի քանի գյուղատեղեր, իսկ գյուղի հարավում՝ նախաուրարտական ամրոցի երկար պարիսպներ, որոնց տակ՝ ձորամիջին, գետակի աջ ափին՝ ոչ խորը այր, որի պատին կան «իծագրեր»։